**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 66

## ԱԿՈՒՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԱՍՆԱԲՈՒՅԺՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի , հիմք ընդունելով համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 23-ի N 8- Ա որոշումը , որոշում եմ '

1. Ակունքի համայնքի անասնաբուժական ծառայության գործունեությունը ապահովելու նպատակով նշանակել անասնաբույժներ.

1)Արտաշես Թովմունու Ավետիսյանին 'Ակունքի համայնքի Ակունք և Կոտայք բնակավայրերը սպասարկելու համար

2) Սամվել Գետևանի Ադամյանին' Կապուտան ,Հատիս , Զովաշեն բնակավայրերը սպասարկելու համար

3) Նաիրի Շաքրոյի Արաբյանին ' Նոր գյուղ բնակավայրը սպասարկելու համար

4) Հայկազ Մարտինի Սմբատյանին ' Զառ և Սևաբերդ բնակավայրերը սպասարկելու համար :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ'** **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

2018 թ. մայիսի 02
գ. Ակունք

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 67

### ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓՈՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 42 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ,հիմք ընդունելով կատուցապատող Աշոտ Բարոյանի դիմումը որոշում եմ ՝

1. Համաձայնեցնել կառուցապատող՝ Աշոտ Բարոյանի կողմից ներկայացրած նախագծային փաստաթղթերը և տալ շինարարության թույլտվություն Ակունքի համայնքի Նոր գյուղի 1-ին տեղամաս 7-րդ փողոց 2 հասցեում գտնվող , ծածկագիր ՝07-049-0045-0002, բնակելի կառուցապատման 0,1 հա հողամասի վրա բնակելի տան կառուցման համար:

2.Շինարարական աշխատանքները կատարել նախագծի համաձայն :

3. Պարտավորեցնել կառուցապատողին շինարրությունը սկսելուց 3 օր առաջ ներկայացնել տեղեկանք շինարարությունն սկսելու վերաբերյալ :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

2018 թ. ________
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱԿՈՒՆՔԻ ՀԱՄԱՅՆՔ

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

N __3_........_, 03........___.....05....._ _____ 2018____ թ.

Տրված է կառուցապատող ______Բարոյան Աշոտ Արամայիսի___________ -ին

(իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման վկայականի համարը,

_________*ք.Աբովյան Սևանի 2/6 51 բն.0.1 հողամաս՝ծածկագիր 07-049-0045-0002*

*,հասցեն Ակունք համայնք գ. Նոր գյուղ 1 փեղ.7 փող.2* ____

ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հասցեն, հողամասի գտնվելու վայրը)

______________________________*բնակելի տան* *կառուցման*______________________________ օբյեկտի

(օբյեկտի անվանումը, ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), հակիրճ բնութագիրը, հիմնական ցուցանիշները)

______________________________________________ շինարարական աշխատանքների կատարման, այդ թվում՝ (նոր կառուցման, վերակառուցման, վերականգնման, ուժեղացման և այլն) կառուցապատվող հողամասի գլխավոր հատակագծի վրա նշված ոչ հիմնական կառույցների ______________________________________________

______________________________________________ տեղադրման համար:

(նշվում են ոչ հիմնական կառույցների անվանումները)

1. Օբյեկտի նախագծային փաստաթղթերը՝

1) մշակվել են ____*«ԱՐՏ.ԱԼԵՔՍ » ՍՊԸ*___________________________

(նախագծային փաստաթղթերի փուլը, նախագծային աշխատանքների

______________________*Լից. 11280*_____________կողմից.

կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)

2) ստացել է (են) ___ __________ 20___ թ. փորձագիտական դրական եզրակացությունը (եզրակացությունները)

______________________________________________

(նշել փորձաքննության տեսակը)

______________________________ կողմից

(նշել փորձաքննության մարմնի (մարմինների) անվանումը, լիցենզիայի համարը)

կամ նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորագիրը՝ ____________________________

(նշել նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորության պայմանագրի համարը)

3) սահմանված կարգով համաձայնեցվել են իրավասու մարմնի, օրենքով սահմանված այլ շահագրգիռ մարմինների

_________*Ակունքի համայնքապետի*________________________________ հետ:

(նշել մարմինների անվանումները և համաձայնեցման ժամկետները)

2. Շինարարական աշխատանքներն իրականացնել ________*1*___*տարվա*________ ընթացքում՝

(նշել շինարարության նորմատիվային տևողությունը)

Ներառյալ ավարտական ակտի տրամադրման համար ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:

2.1. Ապահովել օբյեկտի շահագործման թույլտվության ստացումը ՝

[] ավարտական ակտի տրամադրումից---------------------- ամսվա ընթացքում

[] ավարտական ակտի տրամադրման օրը:

Ներառյալ ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:

3. Շինարարության վարման մատյանը բաղկացած է ____11____ էջից, կարված և դրոշմակնքված է ______

____________________ *Ակունքի համայնքապետարանի* ________________ կողմից:

(իրավասու մարմնի անվանումը)

4. Նախագծային փաստաթղթերը փոփոխվել են (լրացվում է N 1 հավելվածի 110-րդ կետով նախատեսված դեպքերում)

________________________________________ կողմից

(նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)

________________________ և այլ

և սահմանված կարգով համաձայնեցվել իրավասու մարմնի (նշել իրավասու մարմնի անվանումը)

շահագրգիռ մարմինների ________________________________________ հետ:

(նշել օրենքով սահմանված համաձայնեցնող մարմինների անվանումները)

5. Հատուկ պայմաններ՝

1) կառուցապատողը, նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, պարտավոր է հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ.

2) շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում գործում են N 1 հավելվածի 125-128-րդ կետերով սահմանված պահանջները.

3) *(լրացվում է N 1 հավելվածի* 86-րդ կետով *սահմանված դեպքերում)* սույն թույլտվությունը տրվել է սահմանված կարգով հաստատված «Նախագիծ» փուլի հիման վրա, որին հաջորդող «Աշխատանքային փաստաթղթեր» փուլը պետք է ապահովի հաստատված փուլով ընդունված լուծումները և աշխատանքների իրականացման հաջորդականությունը

________________________________________

________________________________________ :

(նշվում են նախապատրաստական, հողային, շինմոնտաժային աշխատանքները և այլ աշխատանքներ)

6. *(լրացվում է N 1 հավելվածի 13-րդ կետով սահմանված դեպքերում)*

Հաշվի առնելով, որ կառուցվող օբյեկտի շինարարությունը հնարավոր չէ առանց գլխավոր հատակագծի վրա

____________________ համարների տակ նշված շենքի (շենքերի) և կամ շինության (շինությունների)

________________________________________ քանդման՝

(նշվում են ամբողջությամբ կամ մասամբ քանդման ենթակա օբյեկտները, դրանց հիմնական ցուցանիշները, ընդհանուր մակերեսը, հարկայնությունը, շինանյութերը և այլն)

սեփականատիրոջը (օգտագործողին) ____________________ տրված սույն

(նշվում է պետական գրանցման վկայականի համարը)

թույլտվությունը

նաև քանդման թույլտվություն է:

Օբյեկտի քանդման աշխատանքներն իրականացնել նախագծային փաստաթղթերով ամրագրված հաջորդականությամբ:

7. Այլ պայմաններ ________________________________________:

(նշվում են իրավական ակտերով և (կամ) պայմանագրով նախատեսված այլ պայմանները)

8. Կառուցապատողը շինարարական (քանդման, ապամոնտաժման) աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ, համաձայն N 5 հավելվածի N 2-5 ձևի, տեղեկացնում է իրավասու մարմնին:

9. Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորմատիվ-տեխնիկական պահանջներին համապատասխան:

ԱԿՈՒՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

Կ. Տ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ԱՊՐԻԼԻ 2018թվականի N 68

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի , որոշում եմ՝

Համաձայն «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի , որոշում եմ՝

1. 2018 թ հունիսի 5 - ին ժամը 11.00-ին հայտարարել մրցույթ համայնքապետարանի աշխատակազմի հետևյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար համաձայնհավելված 1-ի.

1) Կոտայքի մարզի Ակունքի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար (ծածկագիր 1.2-1)

2) Կոտայքի մարզի Ակունքի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական ,եկամուտների հաշվառման և հավաքագրման ,ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետի (ծածկագրի 2. 1-1),

3) Կոտայքի մարզի Ակունքի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական ,եկամուտների հաշվառման և հավաքագրման ,ծրագրերի կազմման և համակարգման բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր 2. 3-1),

4) Կոտայքի մարզի Ակունքի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի (ծածկագիր 2.3-2)

5) Կոտայքի մարզի Ակունքի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի (ծածկագիր 2.3-3)

6) Կոտայքի մարզի Ակունքի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի (ծածկագիր 2.3-4)

2. 2018 թ հունիսի 8 - ին ժամը 11.00-ին հայտարարել մրցույթ համայնքապետարանի աշխատակազմի հետևյալ թափուր պաշտոններըզբաղեցնելու համար համաձայն հավելված 2-ի .

1) Կոտայքի մարզի Ակունքի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական ,եկամուտների հաշվառման և հավաքագրման ,ծրագրերի կազմման և համակարգման բաժնի առաջատար մասնագետի (ծածկագիր 3. 1-1),

2)Կոտայքի մարզի Ակունքի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի (ծածկագիր 3.1-2)

3)Կոտայքի մարզի Ակունքի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի (ծածկագիր 3.1-3)

4)Կոտայքի մարզի Ակունքի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական ,եկամուտների հաշվառման և հավաքագրման ,ծրագրերի կազմման և համակարգման բաժնի առաջին կարգի մասնագետի (ծածկագիր 3. 2-1),

5)Կոտայքի մարզի Ակունքի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական ,եկամուտների հաշվառման և հավաքագրման ,ծրագրերի կազմման և համակարգման բաժնի առաջին կարգի մասնագետի (ծածկագիր 3. 2-2),

6)Կոտայքի մարզի Ակունքի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական ,եկամուտների հաշվառման և հավաքագրման ,ծրագրերի կազմման և համակարգման բաժնի առաջին կարգի մասնագետի (ծածկագիր 3. 2-3),

7)Կոտայքի մարզի Ակունքի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական ,եկամուտների հաշվառման և հավաքագրման ,ծրագրերի կազմման և համակարգման բաժնի առաջին կարգի մասնագետի ծածկագիր 3. 2-4)

3. 2018 թ հունիսի 12 - ին ժամը 11.00-ին հայտարարել մրցույթ համայնքապետարանի աշխատակազմի հետևյալ թափուր պաշտոններըզբաղեցնելու համար համաձայնհավելված 3-ի.

1)Կոտայքի մարզի Ակունքի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետի (ծածկագիր 3.2-5)

2)Կոտայքի մարզի Ակունքի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետի (ծածկագիր 3.2-6)

3)Կոտայքի մարզի Ակունքի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետի (ծածկագիր 3.2-7)

4)Կոտայքի մարզի Ակունքի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետի (ծածկագիր 3.2-8)

5)Կոտայքի մարզի
Ակունքի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական ,եկամուտների հաշվառման և հավաքագրման ,ծրագրերի կազմման և համակարգման բաժնի երկրորդ կարգի մասնագետի (ծածկագիր 3.3-1)

6)Կոտայքի
մարզի Ակունքի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտակա ն ,եկամուտների հաշվառման և հավաքագրման ,ծրագրերի կազմման և համակարգման բաժնի երկրորդ կարգի մասնագետի (ծածկագիր 3.3-2)

7)Կոտայքի
մարզի Ակունքի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտակա ն ,եկամուտների հաշվառման և հավաքագրման ,ծրագրերի կազմման և համակարգման բաժնի երկրորդ կարգի մասնագետի (ծածկագիր 3.3-3)

4. 2018թվականի հունիսի 5-ի մրցույթի նախապատրաստական աշխատանքների իրականացման պատասխանատվությունը և մրցութային հանձնաժողովի աշխատանքների տեխնիկական սպասարկման պատասխանատվությունը դնել Պապին Վարդանյանի վրա,2018թվականի հունիսի 8-ինը և 12-ինը Մարոզ Սարիբեկյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

20 18 թ.
27
գ. Ակունք

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

08 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 69

ԱԿՈՒՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 23-Ի N 2 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի, որոշում եմ `

1.Ակունքի համայնքի ղեկավարի 2018 թվականի հունվարի 23-ի «Ակունքի համայնքապետարանի 2018 թվականի գնումների պլանը հաստատելու մասին» N 2 որոշման մեջ կատարել փոփոխություններ .

1) որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

20*18* թ. *մայիսի* *08*
գ. Ակունք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

05 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 70

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 48 –րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, համայնքի ավագանու 2012 թվականի փետրվարի 29-ին թիվ 10 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Ակունք համայնքի Ակունք գյուղի բնակիչ Հերմինե Հմայակի Հայրապետյանի դիմումները **որոշում եմ՝**

1.Ակունքի համայնքի ներքոնշյալ բնակչին տրամադրել ֆինանսական աջակցություն՝

Հերմինե Հմայակի Հայրապետյան 30 000 դրամ

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

2018 թ. մայիսի 05
գ. Ակունք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 71

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 48 –րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, համայնքի ավագանու 2012 թվականի փետրվարի 29-ին թիվ 10 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Ակունք համայնքի Նոր Գյուղ գյուղի բնակիչներ Կամո Ռաֆիկի Դժումյանի, Նաիրա Զորիկի Միքայելյանի դիմումները **որոշում եմ՝**

1.Ակունքի համայնքի ներքոնշյալ բնակիչներին տրամադրել ֆինանսական աջակցություն՝

Կամո Ռաֆիկի Դժումյան 50 000 դրամ

Նաիրա Զորիկի Միքայելյան 50 000 դրամ

Աշոտ Սերյոժայի Մկրտչյան 40 000 դրամ

Աշոտ Հոմերոսի Մակարյան 60 000 դրամ:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

2019թ. մայիսի 10
գ. Ակունք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 72

## ՍԱՀԱԿ ՊԱՐՍԱՄԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՏԱՅՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի ,հիմք ընդունելով Սահակ Պարսամի Հարությունյանի դիմումը ,որոշում եմ '

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունքի համայնքի Կոտայք բնակավայրի վարչական ղեկավար ' Սահակ Պարսամի Հարությունյանին ,իր դիմումի համաձայն , ազատել զբաղեցրած պաշտոնից :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ' Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

2018 թ. մայիսի 14
գ. Ակունք

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

15 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 73

### ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՏԱՅՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի ,որոշում եմ '

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի Կոտայք բնակավայրի վարչական ղեկավար նշանակել Կոտայք գյուղի բնակիչ' Անդրանիկ Հովհաննեսի Համբարձումյանին:

2. Օրենքով սահմանված կարգով կնքել աշխատանքային պայմանագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից :

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ'** **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

2018թ. ________

գ. Ակունք

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am


# Ո Ր Ո Շ Ու Մ

14 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 74

## ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի ,Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 48 կետի `որոշում եմ

1.Ակունք համայնքի Նոր գյուղ վարչական տարածքի ( ծածկագիր 07-049-0250-0021) հողամասին տրամադրել հասցե Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունքի համայնք գ. Նոր գյուղ 1-ին թաղամաս 1-ին փողոց թիվ 1 հասցեն.

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ՌՈՒԲԵՆՅԱՆ

20 __ թ.__________
գ. Ակունք

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

04 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 75

### ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾԱԽՍԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն Ակունքի համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի N 55-Ն որոշման 2-րդ կետի որոշում եմ՝

1. 09 բաժնի 01 խմբի 1 դասի <<Մանկապարտեզիենքի կապիտալ վերանորոգում>> ծրագրի 5122 սինթետիկ հաշվից 200 000 դրամ տեղափոխել 09 բաժնի 01 խմբի 1 դասի <<Մանկապարտեզիենքի կապիտալ վերանորոգում>> ծրագրի 5134 սինթետիկ հաշվիհաշվին:
2. 05 բաժնի 01 խմբի 1 դասի <<Աղբահանում>> ծրագրի 4637 սինթետիկ հաշվից 200 000դրամ տեղափոխել 01 բաժնի 06 խմբի 1 դասի <<Ընդհանուր բնույթի ծառայություն>> ծրագրի 4241 սինթետիկ հաշվին:
3. 05 բաժնի 01 խմբի 1 դասի <<Աղբահանում>> ծրագրի 4637 սինթետիկ հաշվից 400 000 դրամ տեղափոխել 4213 սինթետիկ հաշվին:
4. 01 բաժնի 01 խմբի 1 դասի <<Օրենսդիր մարմիններ ,պետական կառավարում>> ծրագրի 5113 սինթետիկ հաշվից 300000 դրամ տեղափոխել 5122 սինթետիկ հաշվին:
5. 05 բաժնի 01 խմբի 1 դասի <<Աղբահանում>> ծրագրի 4637 սինթետիկ հաշվից 200 000 դրամ տեղափոխել 4216 սինթետիկ հաշվին:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

20 18թ. մայիսի 04
գ. Ակունք

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
17 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 76

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9, 10, 11 և 15-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով, որ քաղաքացիներ Նաիրա Բալասանյանին և Գրիգորի Աղաջանյանին սեփականության իրավունքով պատկանող 07-049-0250-0021 ծածկագրով հողամասում համաձայն «ԵՐԻՑՈՒԿ» ՍՊԸ կողմից տրամադրված չափագրումների ինքնակամ կառուցված 78.30քմ պահակատան և 41.51ք ծածկի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավուքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառոցված չեն քաղաքաշինության նորմերի էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք,հիմք ընդունելով քաղաքացիներ Նաիրա Բալասանյանի և Գրիգորի Աղաջանյանի դիմումը որոշում եմ '

1. Նաիրա Բալասանյանին և Գրիգորի Աղաջանյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ համայնք Ակունք գ.Նորգյուղ 1-ին թաղամաս 1-ին փողոց թիվ 1 հասցեի հողակտորում ինքնակամ կառուցված 78.30քմ պահակատունը, 41,51քմ ծածկերը համարել օրինական:

2. Պարտավորեցնել Նաիրա Բալասանյանին և Գրիգորի Աղաջանյանին օրինականացված շինությունների համար համայնքայի բյուջե 900105203211 հաշվի համարին կատարել վճարում 1/մեկ/ քառակուսի մետրի համար 1950 դրամ,233630 դրամ:

3.Որոշումն ուժի մեջ է մտնում վճարումները կատարելուց հետո:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

20 __ թ. __________ ___
գ. Ակունք

# ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Նաիրա Բալասանյան,Գրիգորի Աղաջանյան ---- ին հողհատկացման հիմքը ---- Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 24012013-07-0623

Կոտայք — Մարզ
Ակունք — Համայնք
գյուղ Նոր Գյուղ — Հասցե

Հաստատում եմ՝
Համայնքի ղեկավար
Հ.Ռուբենյան
«____» ____________ 2018թ.
Կ. Տ.

Մասշտաբ 1: 1000




Որից՝ ինքնակամ կառուցված
1.պահակատուն - 78.30 քմ
2.ծածկ - 10.76քմ
3.ծածկ - 30.75քմ

Որից՝ գյուղատնտեսական արտադրական - 0,45573հա,
վարելահող - 0,02707

## ՀՈՂԱՄԱՍԻ

| | |
|---|---|
| Մակերեսը(հա) | 0.48280 |
| Ծածկագիրը | 07-049-0250-0021 |
| Նպատակային նշանակությունը | արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության,գյուղատնտեսական |
| Գործառնական նշանակությունը | գյուղատնտեսական արտադրական, վարելահող |
| Հողամասը ծանրաբեռնված է | |

| Հրջադարձային (բեկման) կետեր | Կոորդինատները Y | Կոորդինատները X | Գծային չափերը (մետր) | Սահմանակից սեփականատիրոջ (օգտագործողի) անուն, ազգանունը (անվանումը) |
|---|---|---|---|---|
| 1 | 8470059.0895 | 4461097.3783 | 80.44 | |
| 2 | 8470070.2107 | 4461177.0503 | 2.92 | |
| 3 | 8470073.1205 | 4461176.7901 | 65.75 | |
| 4 | 8470138.6079 | 4461170.9341 | 6.15 | |
| 5 | 8470144.7348 | 4461170.3862 | 42.64 | |
| 6 | 8470126.4517 | 4461131.8626 | 36.46 | |
| 7 | 8470110.8172 | 4461098.9199 | 26.01 | |
| 8 | 8470084.8144 | 4461098.1443 | 9.75 | |
| 9 | 8470075.0667 | 4461097.8540 | 7.44 | |
| 10 | 8470067.6345 | 4461097.6328 | 4.66 | |
| 11 | 8470062.9720 | 4461097.4940 | 3.88 | |
| 1 | 8470059.0895 | 4461097.3783 | | |

## ՇԻՆՈՒԹՅԱՆ

| Համարը ըստ հատակագծի | Գործառնական նշանակությունը կամ անվանումը | Հրջադարձային (բեկման) կետեր | Կոորդինատները Y | Կոորդինատները X | Գծային չափերը (մետր) |
|---|---|---|---|---|---|
| 1 | պահակատուն | 1 | 8470074.9625 | 4461105.9240 | 3.60 |
| | | 2 | 8470078.5603 | 4461106.0516 | 5.99 |
| | | 3 | 8470084.5467 | 4461106.2640 | 8.12 |
| | | 8 | 8470084.8144 | 4461098.1443 | 9.75 |
| | | 9 | 8470075.0667 | 4461097.8540 | 8.07 |
| | | 1 | 8470074.9625 | 4461105.9240 | |
| 2 | ծածկ | 1 | 8470074.9625 | 4461105.9240 | 3.00 |
| | | 2 | 8470074.8731 | 4461108.9226 | 3.60 |
| | | 3 | 8470078.4715 | 4461109.0299 | 2.98 |
| | | 4 | 8470078.5603 | 4461106.0516 | 3.60 |
| | | 1 | 8470074.9625 | 4461105.9240 | |
| 3 | ծածկ | 1 | 8470063.8241 | 4461104.1519 | 4.67 |
| | | 2 | 8470068.4873 | 4461104.2909 | 6.71 |
| | | 10 | 8470067.6345 | 4461097.6328 | 4.66 |
| | | 11 | 8470062.9720 | 4461097.4940 | 6.71 |
| | | 1 | 8470063.8241 | 4461104.1519 | |
| 4 | անասնաշենք | 1 | 8470124.2292 | 4461132.9174 | 2.21 |
| | | 2 | 8470125.1768 | 4461134.9139 | 3.31 |
| | | 3 | 8470122.1865 | 4461136.3331 | 38.30 |
| | | 4 | 8470138.6079 | 4461170.9341 | 6.15 |
| | | 5 | 8470144.7348 | 4461170.3862 | 42.64 |
| | | 6 | 8470126.4517 | 4461131.8626 | 2.46 |
| | | 1 | 8470124.2292 | 4461132.9174 | |

Կատարող ____ Ս.Գրիգորյան — (ստորագրություն) Անուն, ազգանուն — 19.04.2018
Որակավորման վկայականի համարը 040 — 15.12.2011թ — տրման ամիս, ամսաթիվը
Իրավաբանական անձի 11.110.00158 (պետական գրանցման համարը) «ԵՐԻՑՈՒԿ» ՍՊԸ (անվանումը) ____ (ստորագրությունը) Կ.Տ

# ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Նաիրա Բալասանյան,Գրիգորի Աղաջանյան

Կոտայքի մարզ Ակունք համայնք գ.Նորգյուղ

Մասշտաբ 1: 200




4.անասնաշենք
H=3.10
h=2.90
D=0.40
d=0.20-0.40




1.պահակատուն
H=
h=.90
D=.40
d=.40




2.ծածկ




3.ծածկ

Կատարող (ստորագրություն) Ս.Գրիգորյան Անուն, ազգանուն 19.04.2018

Որակավորման վկայականի համարը 040 15.12.2011թ տրման ամիս, ամսաթիվը

Իրավաբանական անձի 11.110.00158 (պետական գրանցման համարը) «ԵՐԻՑՈՒԿ» ՍՊԸ (անվանումը) (ստորագրությունը) Կ.Տ

ERITSUK
08501587

# Շինությունների բնութագիր

| ՀՀ | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը | Հարկ | Համարակալումը | Մակերեսները (քմ) | | Բարձրությունը (մ) | Ծավալը (խմ) | Կառուցման տարեթիվը | Տանիքի նյութը | | | | Ավարտվածության աստիճանը | | | | Պատերի շինանյութի տեսակը | Ին ծակի նյութը | | հարդարումն ըստ կողմերի | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Օրինական | Ինքնակամ | | | | թիթեղ | շիֆեր | կղմինդր | այլ նյութ | ավարտուն | մինչև 50% | 50-80% | 80% և ավելի | | փայտ | երկաթբետոն | Սրբատաշ | Երեսապատված | Ծեփված | Անտաշված | Առանց ճակատային հարդարման |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 |
| 1 | արտադրական | պահակատուն | 1 | 1 | | 60.79 | 2.6 | 158.05 | 2006 | V | | | | | | | V | տուֆ | | V | | | | | V |
| 2 | արտադրական | ծածկ | | | | 10.76 | | | 2018 | | | | | | | | | | | | | | | | |
| 3 | արտադրական | ծածկ | | | | 28.72 | | | 2018 | | | | | | | | | | | | | | | | |
| 4 | արտադրական | անասնաշենք | 1 | 1 | 196.02 | | 2.9 | | 2018 | | V | | | | | | V | տուֆ | | V | | | | | 4 |
| 5 | արտադրական | պարիսպ | | | 12.44 | | 2.6 | | 2006 | | | | | | | | V | բետոն | | | | | | | 2 |
| 6 | արտադրական | պարիսպ | | | 0.5 | | 2.6 | | 2006 | | | | | | | | V | տուֆ | | | | | | | 2 |
| 7 | արտադրական | պարիսպ | | | 27.69 | | 2.6 | | 2006 | | | | | | | | V | տուֆ | | | | | | | 2 |

| Շինության ընդհանուր մակերեսը (քմ) | Այդ թվում | |
|---|---|---|
| | Օրինական կառուցված (քմ) | Ինքնակամ կառուցված (քմ) |
| 27 | 28 | 29 |
| 309.23 | 208.96 | 100.27 |

Կատարող ______ (ստորագրություն) Ս.Գրիգորյան (անուն, ազգանուն) 18.04.2018 (ամիս, ամսաթիվ)

Որակավորման վկայականի 040 (համարը) 15.12.2011 (տրման ամիս, ամսաթիվ)

Իրավաբանական անձի 11.110.00158 (պետական գրանցման համարը) <<ԵՐԻՑՈՒԿ>> ՍՊԸ (անվանումը) ______ (ստորագրություն) Կ.Տ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

17 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 77

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի նոյեմբերի 10-ի N 1582-Ն որոշման ,որոշում եմ '

1. Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառած վնասները գնահատելու նպատակով ստեղծել համայնքային հանձնաժողովները հետևյալ ուղղություններով՝

1) գյուղատնտեսությանը հասցված վնասների գնահատման հանձանաժողով համաձայն հավելված 1-ի,

2) բնակչության գույքին հասցված վնասների գնահատման հանձնաժողով համաձայն հավելված 2-ի ,

3) ենթակառուցվածքներին հասցված վնասների գնահատման հանձնաժողով համաձայն հավելված 3-ի ,.

4) բժշկասանիտարական հնարավոր վնասների գնահատման հանձնաժողով համաձայն հավելված 4-ի :

2.Հաստատել հանձնաժողովների աշխատակարգը համաձայն հավելված 5-ի:

3.Ուժը կորցրած ճանաչել համայքի ղեկավարի 2011 թվականի դեկտեմբերի 7-ի «Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց վնասի գնահատման հանձնաժողով ստեղծելու վերաբերյալ» N 56 որոշումը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

20 18 թ. ________ 17
գ. Ակունք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 78

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի ,Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 48 կետի ՝որոշում եմ

1.Ակունք համայնքի Զառ վարչական տարածքի 0.1055հա հողամասին տրամադրել հասցե Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունքի համայնք գ. Զառ գյուղ Կենտրոնական փողոց թիվ 12/4 հասցեն.

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

2018 թ. մայիսի 18
գ. Ակունք

Հաստատում եմ՝
համայնքի ղեկավար
<<——>> —— ——

# ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Ակունք համայնք
(Անուն, ազգանուն)
ին Հողհատկացման հիմքը << կառ. 23.02.2006թ. N335-ն որ.

Կոտայք
Մարզ

Ակունք
Համայնք

գ. Ձառ
Հասցե

Մասշտաբ 1:1000




| ՀՈՂԱՄԱՍԻ | | Անկյունների բեկման կետեր | Կոորդինատներ Y | Կոորդինատներ X | Հեռավորություն (մետր) | Սահմանակից սեփականատիրոջ (օգտագործողի) անուն, ազգանուն (անվանումը) |
|---|---|---|---|---|---|---|
| Մակերեսը (քմ,հա) | 0.1055 | 1 | 8477334.7290 | 4458139.1219 | 45.84 | |
| Ծածկագիրը | 0018- | 2 | 8477334.3469 | 4458184.9570 | 29.60 | |
| | | 3 | 8477363.1117 | 4458177.9849 | 5.28 | |
| Նպատակային նշանակությունը | բնակավայրերի | 4 | 8477361.9777 | 4458172.8257 | 6.41 | |
| | | 5 | 8477360.6027 | 4458166.5696 | 11.54 | |
| Գործառական նշանակությունը | բն. պլ | 6 | 8477358.2632 | 4458155.2711 | 5.68 | |
| | | 7 | 8477357.0519 | 4458149.7261 | 11.63 | |
| Հողամասը ծանրաբեռնված է | —— | 8 | 8477354.6657 | 4458138.3477 | 19.95 | |
| | | 1 | 8477334.7290 | 4458139.1219 | | |

| ՇԵՆՔ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆ | |
|---|---|
| Շենքի, շինության համարը հատակագծի վրա | Գործառական նշանակությունը (անվանումը) |
| | |

Կատարող________________ Վ. Վարդանյան
(ստորագրություն) (Անուն, ազգանուն)

Որակավորման վկայականի համարը 0339 14.05.2014թ
(տրման ամիս, ամսաթիվ)

Իրավաբանական անձի 03Ա 061920 «ԳԻՍ-ԱՐՏ» ՍՊԸ
(պետական գրանցման համար) (անվանում) (ամիս, ամսաթիվ) (ստորագրություն)

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 79

## ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾԱԽՍԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն Ակունքի համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի N 55-Ն որոշման 2-րդ կետի որոշում եմ՝

1. 08 բաժնի 02 խմբի 4 դասի <<Այլ մշակութային միջոցառումներ>> ծրագրի 4239 սինթետիկ հաշվից 250 000 դրամ տեղափոխել 10 բաժնի 07 խմբի 1 դասի <<Սոցիալական օգնություն բնակիչներին>> ծրագրի 4729 սինթետիկ հաշվիհաշվին:
2. 50 000 դրամ տեղափոխել 08 բաժնի 03 խմբի 3 դասի <<Լրագրություն>> ծրագրի 4234 սինթետիկ հաշվիհաշվին:
3. 200 000 դրամ տեղափոխել 01 բաժնի 01 խմբի 1 դասի <<Օրենսդիր մարմիններ, պետական կառավարում>> ծրագրի 4237 սինթետիկ հաշվիհաշվին:
4. 150 000 դրամ տեղափոխել 01 բաժնի 01 խմբի 1 դասի <<Օրենսդիր մարմիններ, պետական կառավարում>> ծրագրի 4252 սինթետիկ հաշվիհաշվին:
5. 04 բաժնի 02 խմբի 1 դասի <<Գյուղատնտեսություն>> ծրագրի 5129 սինթետիկ հաշվից 200 000 դրամ տեղափոխել 08 բաժնի 2 խմբի 3 դասի 5122 սինթետիկ հաշիվ:
6. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

2018թ. մայիսի 18
գ. Ակունք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 80

ՅՈՒՐԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կոտայքի մարզի Ակունքի համայնքապետարանը, 2018 թվականի մայիսի 21-ի դռնբաց նիստում քննարկեց Յուրի Հայրապետյանի նկատմամբ համայնքի սեփականություն հանդիսացող, իրեն վարձակալության իրավունքով հատկացված հողամասի հատակագիծը հաստատելու և դրա վրա առանց քաղաքաշինական հաստատված փաստաթղթերի ինքնակամ շինություն կատարելու առիթով հարուցված վարչական վարույթի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ հարցը:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Յուրի Հայրապետյանը վարույթի լսումներին չի ներկայացել, իսկ վերջինիս պատշաճ ծանուցումը հավաստող ապացույցը՝ Յու. Հայրապետյանի ստորագրությամբ ծանուցագիրը Ակունքի համայնքապետարան դեռևս չի ստացվել, գտա, որ անհրաժեշտ է վարչական վարույթը երկարաձգել ևս 10 օր ժամկետով և վարչական վարույթի հասցեատիրոջը հաջորդ լսումների մասին ծանուցել նաև ինտերնետային ծանուցումների կայքում որոշումը տեղադրելու միջոցով:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետով, ըստ որի՝ վարչական վարույթի ժամկետը կարող է երկարաձգվել, եթե՝ գործի քննարկման համար էական համարվող հանգամանքներ պարզելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել լրացուցիչ տեղեկություններ կամ փաստաթղթեր ձեռք բերել և վարչական վարույթի մնացած ժամկետում հնարավոր չէ ըստ էության որոշում ընդունել, իսկ ըստ 2-րդ մասի՝ վարչական վարույթի ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 10 օր ժամկետով, որոշում եմ

1.Յուրի Հայրապետյանի նկատմամբ Կոտայքի մարզի Ակունքի համայնքապետարանում 2018 թվականի ապրիլի 25-ին Յու. Հայրապետյանի դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի ժամկետը երկարաձգել ևս 10 օրով՝ մինչև 31.05.2018թ. ժամը 15:30-ն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պատճենը Յուրի Հայրապետյանին հանձնելուն հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ ուժի մեջ մտնելու պահից 10-օրյա ժամկետում: Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ վարչական բողոքի քննարկման արդյունքներին համաձայն չլինելու դեպքում՝ բողոքի վերաբերյալ որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկ ամսյա ժամկետում, իսկ վարչական բողոք չբերելու դեպքում՝ ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

2018թ. Մայիսի 21

գ. Ակունք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 81

## ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի , «Նորմատիվ իրավական ակտերի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի որոշում եմ '

1. լուծարել ' Ակունքի համայնքի ղեկավարի 16 ապրիլի 2018 թվականի «Ուղղակի վաճառքով հողամասի օտարման մասին » N 54 որոշման համաձայն կնքված Անշարժ գույքի ուղղակի վաճառքի պայմանագիրը վավերացված Կոտայքի նոտարական գրասենյակի նոտար Նունե Մանուչարյանի կողմից' գրանցամատյան 2100 :

2. Ուժը կորցրած ճանաչել Ակունքի համայնքի ղեկավարի 16 ապրիլի 2018 թվականի «Ուղղակի վաճառքով հողամասի օտարման մասին » N 54 որոշմը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ' Հ.ՌՈՒԲԵՆՅԱՆ

2018 թ. մայիսի 22
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

# ՏԵՂԵԿԱՆՔ

## ԳՈՒՅՔԻ ԱՌԱՆՁԻՆ ՈՐԱԿԱԿԱՆ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ ԵՎ ԴՐԱ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՌԱՆՁԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ (ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**16/05/2018թ. N ԱՏ-14/05/2018-17-0075**

*Դիմող՝*

***ԺՈՐԱ ՄԻՆԱՍՅԱՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ***

*, , ,*

**Ի պատասխան Ձեր 14/05/2018-17-0075 դիմումի** տեղեկացնում ենք, որ Կոտայքի մարզ համայնք Ակունք գյուղ Նոր գյուղ 1-ին փողոց թիվ 14/5 հողամաս հասցեի անշարժ գույքի /իրավունքների պետական գրանցման թիվ 05042018-07-0054 վկայական/ նկատմամբ անշարժ գույքի ուղղակի վաճառքի 19.04.20018թ. ս.մ 2100 վաճառքի պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցում չի կատարվել:

*Տեղեկանքը կազմվել է ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի* ***Մարզերի միավորված ստորաբաժանման արխիվի առաջատար մասնագետ*** ***Հասմիկ Հակոբյանի*** *կողմից*

**Սույն տեղեկանքը հաստատված է էլեկտրոնային եղանակով՝ տեղեկանքը կազմող պաշտոնատար անձի կողմից:*

*Տեղեկանքը հանձնող ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի սպասարկման գրասենյակ Կ.Տ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

23 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 82

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 48 –րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, համայնքի ավագանու 2012 թվականի փետրվարի 29-ին թիվ 10 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Ակունք համայնքի բնակիչներ Աննա Արամյանի , Վաչագան Ազիզյանի դիմումները **որոշում եմ՝**

1.Ակունքի համայնքի ներքոնշյալ բնակիչներին տրամադրել ֆինանսական աջակցություն՝

Աննա Բաբկենի Արամյանին 150 000 դրամ

Վաչագան Նորիկի Ազիզյանին 40 000 դրամ:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

2018 թ. մայիսի 23
գ. Ակունք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 83

## ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման հավելված 1-ի 21-րդ մասի որոշում եմ՝

1. Ակունքի համայնքապետարանի 2018թվականի կարիքների համար <<ԿՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/01>> ծածկագրով գնում կատարելու համար սահմանել պատասխանատու ստորաբաժանում.

1) ղեկավար՝ Վլադիկ Աբրահամյան,

2) անդամ՝ Հենրիկ Սարգսյան

3) անդամ՝ Անուշ Գարսևանյան

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

20 18թ. մայիսի 23
գ. Ակունք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

24 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 84

ԱԿՈՒՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 23-Ի N 2 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի, որոշում եմ՝

1.Ակունքի համայնքի ղեկավարի 2018 թվականի հունվարի 23-ի «Ակունքի համայնքապետարանի 2018 թվականի գնումների պլանը հաստատելու մասին» N 2 որոշման մեջ կատարել փոփոխություններ .

1) որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

20*18* թ. *մայիսի* *24*

գ. Ակունք

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ու Մ

29 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 85

### ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի » 61-րդ և 70 -րդ հոդվածների ,«Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի ,հիմք ընդունելով համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 26-ի N 18-Ն , ապրիլի 10-ի N 22-Ն որոշումները և 2018 թվականի ապրիլի 21-ին Ակունքի համայնքապետարանում կայացած աճուրդի արդյունքները՝ որոշում եմ ՝

1. Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, 0.07 հա ,գյուղարտադրական օբյեկտների հողամասը , հասցեն Ակունք համայնք գ. Զառ Կենտրոնական փողոց 2/2 , լոտ 3, ծածկագիր 07-027-0009-0037,օտարել աճուրդում հաղթող ճանաչված Գոռ Հայկի Սարգսյանին 317 000 դրամով :

2.Բնակավայրի նշանակության բնակելի կառուցապատման 0.1 հա , կոդ 07-027-018-016,Ակունքի համայնք գ. Զառ Կենտրոնական փողոց 10/1 հասցեում գտնվող հողամասը օտարել աճուրդում հաղթող ճանաչված Հովհաննես Գևորգի Գասպարյանին 435 000 դրամով :

3.Գյուղնշանակության 0.367 հա արոտը ,կոդ 07-009-0117-0104,հասցեն գ. Ակունք,օտարել աճուրդում հաղթող ճանաչված Էդիկ Ալեքսանդրի Ազիզյանին 130 000 դրամով :

4. Գյուղնշանակության 0.80172 հա արոտը ,կոդ 07-009-0104-0312, հասցեն գ.Ակունք ,օտարել աճուրդում հաղթող ճանաչված Ջանիկ Վարդանի Սամսոնյանին 120 000դրամով:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված ժամկետում գումարի մնացած մասը բանկում մուծելուց հետո:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

20 __ թ. ______________
գ. Ակունք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 86

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 48 –րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, համայնքի ավագանու 2012 թվականի փետրվարի 29-ին թիվ 10 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Ակունք համայնքի Կոտայք գյուղի բնակիչ Մարգարիտ Սիմոնի Համբարձումյանի դիմումը **որոշում եմ՝**

1.Ակունքի համայնքի ներքոնշյալ բնակիչներին տրամադրել ֆինանսական աջակցություն՝

Մարգարիտ Սիմոնի Համբարձումյան 30 000 դրամ

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

2018թ. մայիսի 30
գ. Ակունք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 87

## ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման հավելված 1-ի 6-րդ կետի, որոշում եմ՝

1. Սահմանել <<ԿՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/01>> ծածկագրով գնանշման հարցման գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կազմը՝ հետևյալ անդամներով.

նախագահ՝ Մարոզ Սարիբեկյան
անդամ՝ Մանիշակ Հովհաննիսյան
անդամ՝ Հասմիկ Մելքումյան
քարտուղար՝ Սիլվա Գրիգորյան

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

20 18 թ. մայիսի 30
գ. Ակունք

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 88

## ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾԱԽՍԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն Ակունքի համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի N 55-Ն որոշման 2-րդ կետի որոշում եմ՝

1. Համայնքի բյուջեի գույքահարկի քաղաքացիներից եկամտատեսակի II եռամսյակի 9 348 200 հազար թիվը փոխարինել 11 848 200 թվով:
2. Ծախսային մասում
01 բաժնի 1 խմբի 1դասի 4264 երկրորդ եռամսյակի 1 450 000 թիվը փոխարինել 1 950 000 թվով:
3. 01 բաժնի 1 խմբի 1 դասի 4111 36 173 200 թիվը փոխարինել 37 673 200 թվով
4. 10 բաժնի 07 խմբի 01 դասի 4729 հոդվածի երկրորդ եռամսյակի 1 050 000 թիվը փոխարինել 1 550 000 թվով:
5.08 բաժնի 2 խմբի 4 դասի 4239 հոդվածից 300 000 դրամ տեղափոխել 01 բաժնի 6 խմբի 1 դասի 4241 հոդված:
6. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

2018թ. մայիսի
գ. Ակունք